

Պատասխանողի համար էլ պարզ լինի, թե կոնկրետ ինչպիսի հիմքերով և առարկայով ներկայացված հայցի դեմ պետք է պաշտպանվի:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից անհրաժեշտ չափով պետական տուրքի գումարը վճարվել է, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

### **Վ Ճ Ո Ւ Յ**

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «ՇԻՆՍԵՐՏԻՖԻԿԱՏ» ՍՊԸ-ի միջև 23.09.2020թ. կնքված թիվ «ՀՀԲԿ-ԳՀԽԾՁԲ-20/22» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Գուրգեն Եղիազարյանի կողմից միակողմանի լուծելու մասին 03.10.2025թ. որոշումը /ծանուցումը/, ինչպես նաև «ՇԻՆՍԵՐՏԻՖԻԿԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Գուրգեն Եղիազարյանի 14.10.2025թ. կայացրած N 06-2025 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝**  
**Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Digitally signed by GRIGORYAN TIGRAN  
4008820477  
Date: 2025.12.01 12:00:50 AMT



Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել <https://verify.e-gov.am> կայք  
ուև մուտքագրելով IEBC-B327-4651-9369 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

---

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "[Էլեկտրոնային դատավարություն](https://cabinet.armlex.am)" համակարգ՝  
[cabinet.armlex.am](https://cabinet.armlex.am)